

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Սուրբ Հոգու կենսաբերող շնորհների ներքո, մի՞շտ նախաձեռնիր ոգով, Հայ Եկեղեցին շարունակում է քրիստոնեական քարոզչությունը, նրա հայացումը, սակայն, առանց կղզիացման քրիստոնեական ընդհանրական մեծ ընտանիքից:

Ինչպես Հոգեգալստյան նշանավոր օրվան, երբ «բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել... Աստծո մեծագործությունների մասին», այնպես էլ այսօր Ս. Հոգու գալստյան մեծահամբավ տոնի առթիվ բացենք մեր հոգիները Ս. Հոգու շնորհների հանդեպ և ականջալուր լինենք Պետրոսի խրախուսիչ աստվածաշունչ խոսքերին. «Ապաշխարեցե՛ք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը, որովհետև խոստումը ձեզ համար է, ձեր որդիների և բոլոր հեռավորների համար, որոնց կկանչի մեր Տեր Աստվածը» (Գործք Բ 38—39):

Քրիստոսի համբարձումից հետո Ս. Հոգին ստանձնեց մխիթարչի և առաջնորդի առաքելությունը:

Քրիստոսից հետո մենք չմնացինք մենակ ու լքված, նա մեզ առաքեց երկնային Հոր Ս. Հոգին. այդ Ս. Հոգով է, որ մենք շարունակում ենք ապրել, աղոթել, սիրել և **սիրո հաղորդակցության** մեջ մնալ: Սուրբ Հոգին անսպառ աղբյուրն է, «յորմէ բաշխի տիեզերականն շնորհք»:

Կենդանարար Ս. Հոգին շարունակում է բողբոջեցնել մեր սրտերում երկնային Տիրոջ վառ ու անսպառ սերը: Սիրո հոգին շարունակում է շաղկապել մեր սրտերը, զի մե՛կ ենք Ս. Հոգով և ամբողջական ենք Քրիստոսի խորհրդավոր մարմնով: Նա սրբազան հաղորդությունն է սիրո մեջ և ճանաչումն այդ սիրով հաստատված միաբանական կյանքի:

Այդ Սուրբ Հոգով է, որ շարունակում ենք հավատալ Քրիստոսին և մընալ քրիստոնյաներ աշխարհի վրա:

Նա մեր երկրային կյանքի ճշմարիտ ուղեցույցն է.

— Օրհնեա՛լ Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ:

Եվ երկնային կյանքի սրբանորոգ առաջնորդը.

— Սուրբ Հոգին կենդանարար, գովեցէ՛ք:

Այսօր էլ, նույն կենդանապարգև զորությամբ, առաջնորդն ու մղիչն է ընդհանրական Եկեղեցվո, շնորհողն ու քավիչը: Մեր սրտերին թարմություն ու պարզություն ափողն ու կենդանացուցիչը, համայնն ու ընդհանրականը: Կյանքը խմորողն ու օծողը, կյանքի ամենաբուժ պարգևիչը.

Սուրբ, սուրբ, սուրբ Հոգի, լի՛ են երկինք և երկիր, ինչպես նաև մեր սրտերը քեզանով:

Բխումն ի Հօրէ,—մեր սրտերից բխեցրու քեզ հաճելի խոսքեր ու գործեր, քեզ փառաբանելու երգեր ու հիմներ, քանզի առանց քո շնորհների կյանքը կդառնա նաևիր ու տարտամ. «Աղբիւր կենաց՝ բաշխող շնորհաց Հոգիդ իջեալ ի բարձանց, զանապական պարգևս քո բաժանեցեր յառաքեալսն» (Շարակնոց), այսօր էլ շարունակիր քո շնորհները ափռել մեզ վրա:

Մեր աղաչանքը քեզ շնորհաբեր Ս. Հոգի.
Ուղարկի՛ր մեզ վրա քո խնդությունը,
որ է արագավազ ու կազդուրիչ.
քո միսիթարությունը, որ է հանդարտող ու ամոքիչ.
քո շռայլությունը, որ է հարստացնող ու պարգևիչ.
քո զորությունը, որ է գոտեպնդող ու զննիչ.
Օծի՛ր մեզ ներսից ու դրսից քո համբույրներով.
Օ՜, ամենազոր Ս. Հոգի, համազոր երկնային Հոր
և փառավորակից Տեառն մերո և Փրկչին Հիսուսի
Քրիստոսի: